

ՊԱՏԱՌԻԿ ՄԻ Ի ԳՐՈՑ

Մ Ե Ծ Ի Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ի Ն Վ Ա Ր Գ Ա Ն Ա Ց

Վ Ա Ս Ն Գ Ի Ի Տ Ի Տ Ա Ռ Ի Ց Մ Ե Ր Ո Ց Ի Զ Ե Ռ Ն Ս Մ Ե Ս Ր Ո Պ Ա Ց

Պարտ է դիտել զի հնգետասան ազգ են՝ որ դպրութիւն գիտեն. վասն զի 'ի նոյն հինգ ազգ բաժանեցան՝ յերեք որդւոցն՝ Սեմայ, ֆամայ և Յաբեթի:

Որդիք Յաբեթի՝ որ դպրութիւն գիտեն՝ այս են. Հայք, Եբերացիք, Լատի. նացիք, Սպանիացիք, Յոյնք, Մարք. վեց ազգք:

Որդիք Սեմայ՝ որ գիտեն դպրութիւն. Հրեայք, Պարսք, Գաղղէացիք, Հնդիկք, Ասորեստանեայք. հինգ ազգք:

Որդիք Քամայ՝ որ գիտեն դպրութիւն, Փիւնիկեցիք, Եգիպտացիք, Պամփիւ. լացիք, Փոիւգացիք. ազգ չորք: — Ընդ ամէնն հնգետասան ազգ:

Բայց յուրկեաց և առ այլ ազգս, որպէս Ողլուանք և Վիրք և Խայտայիք և Բուլղարք, և այլք ևս:

Բայց յԱստուծոյ և 'ի շնորհաց նորա՝ երկու ազգ առին գիր. Հրեայք և Հայք: Եւ ո՞ր են գրերն զոր պարգևեաց Աստուած: — Պատասխանի. այս են. վեց գիր ձայնաւոր և երեքտասան անձայն: Եւ ձայնաւորքն են այս. ա, ե, է, ը, ի, ո, ւ. և անձայնքն են այս. բ, գ, ժ, ծ, ճ, չ, ջ, վ, ց, շ, ճ, յ, փ. Ընդ ամէնն իննետարն: Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ. զի Ասորիք ընդ մեր թագաւորօքն էին, և նոցայն քսան և երկու գիր է. 'ի նոցանէ ջանացան առնել մեր գիր: Եւ լիալ էր հոյսերէն նշանագիր 'ի հին ժամանակս՝ սակաւ. և զի չկարէին բանել (գուցէ բաւել) նոքօք, թողին և մոռացաւ. Եւ երբ դարձեալ 'ի խնդիր եւ զեն, գտաւ առ Գանիէլանուն ասորի եւ պիսկոպոս մի. և Սահակ և Մեսրոպ ա-

ռաքեցին զԱրէլանուն երէց ասորի, և եւբեր: Եւ զի չբերէր լիով պատարտութիւն լեզուիս, գնաց դարձեալ Մեսրոպ առ նոյն եպիսկոպոս Գանիէլ. և սակաւ ինչ աշխատ եղեն, և չկարացին ինչ աւելի շահիլ. զի զառաջինն 'ի նոցանէ էր առեալ եօթնետասան գիր, զի զհինգ գիրն թողեալ էր և չէր թարգմանեալ. երբ ջանային թէ թարգմանեմք ըստ մեր լեզուիս, չգայր 'ի բան այն հինգ գիրն: Ապա յազօթս ապաւինեալ տեսանէր մարգարէական աչօք՝ թաթ ձեռին աջոյ, որ դրէր 'ի վերայ վիմի. և ամենայն հանգամանքն և որպիսութիւնն տպաւորեցաւ 'ի սիրտն. և վաղվազակի ըստեղծանէր իննետասան գիր: Եւ այն՝ որ եօթն ասեն, վասն նոցա պատուակաւ նութեանն ասեն՝ որ ձայնաւորք են, և որպէս հոգի են այլոցն:

Եւ ընդէր ասեն եօթն, զի վեց են ձայնաւորք: — Պատասխանի. զի է գիրըն կայր յԱսորոցն. և նա զայն էառ 'ի Գանիէլէ՝ վարդապետն Մեսրոպ, վասն այնորիկ զայն այլ նմա տան. բայց 'ի մարդոյ օգտեցաւ զէ գիրն, և զինն տասն յԱստուծոյ:

Եւ վասն եօթն զրոյն առաւել պիտանութեան, զեօթն գիրն մէն ասեն և գովեն, և զերկուտասանն ոչ յիշեն. այլ զայս հաստատ տես:

Եւ ասեն թէ ալփայն այլոցդ կայ՝ էր չառնուին: — Ասեմք թէ Ասորոցն տար է, ո և ու այս է, ու չկայ: Եւ այլքըդ զի ունին. բայց այլ կերպիւ մերն յԱստուծոյ ձեացաւ օրինակն. այս առանց կարծեաց է:

ՈՍԿԻՓՈՐԻԿ